Հեղինակ՝ Քրիստինե Սահակյան

ՄԵԿ ԲԱՌ ԵՐԿՈՒ ԲԱՌՈՎ

Նպատակ

Նոր բառեր կազմելու կարողության զարգացում:

Անհրաժեշտ նյութեր

Նկարներ, որոնց վրա պատկերված են այնպիսի առարկաներ, որոնց անվանումները միացնելով՝ կստանանք նոր բառեր. շուն, ձուկ, ծաղիկ, աման, մեծ, հասակ, զգեստ, պահարան, գետ, ձի, արև, ծաղիկ:

Ընթացք

Մասնագետը հերթով ասում և շարքից ցույց է տալիս նկարներ: Երեխան պետք է ընտրի այնպիսի նկարներ, որոնց անվանումները միացնելով՝ կստացվեն նոր բառեր: Առաջադրանքը ճիշտ կատարելու դեպքում երեխան խրախուսվում է կպչուն աստղիկներով: Աշխատանքը խմբային ձևով իրականացնելիս հաղթում է նա, ով կարողանում է կազմել ամենից շատ բառեր:

Խաղը նախատեսված է անհատական կամ խմբային պարապմունքների համար: